

ԸՆԴՀԱՆՍՈՒՐ ԴՐՈՒՄԻ ՆԱԽԱՐԱՐՈՒՄԻ ԿԱՌԱՐԱԾՈՒԹՅԱՆ ՀՈՎԱԿԻՄԻ ՀՈՎԱԿԻՄՅԱՆԻ

«ՎԱՆՈՒ ՄԻՐԱԴԵՂՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ»

ԹԵԿՆԱԾՈՒՄԿԱՆ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ողջունելի է, որ նարագույն ժամանակների ինքնատիպ ու հետաքրքիր արձակագիրներից մեկը՝ Վանո Միրադեղյանն իր ստեղծագործությամբ արժանանում է գիտական քննության ու արժևորման, մանավանդ որ այդ ինքնատիպ անհատականության կյանքի և ստեղծագործության վերաբերյալ հրապարակի վրա չկա որևէ ամբողջական գրականագիտական ուսումնասիրություն: Ժամանակին հայ գրողների և գրաքննադատների՝ Միրադեղյան գրողի և նրա ստեղծագործությունների մասին մամուլում հրատարակած հոդվածներն ու գրախոսությունները նույնպես համակարգված վերլուծության ու գնահատման են արժանանում այս ատենախոսության մեջ:

Փաստորեն, ներկա ատենախոսությունն առաջնեկն է այս բնագավառում, և հեղինակը՝ Հ. Հովակիմյանը՝ կարապետը կամ ճանապարհի բացող առաջնորդը:

Հետաքրքիր է, որ վերջին տասնամյակների պոեզիայի վերաբերյալ ուսումնասիրությունները շատ են, մանավանդ գեղարվեստականագուրկ անցողիկ պոեզիայի, ինչի հանդեպ իմաստունի կեցվածք են ընդունում «առանձնաշնորհյալ հասկացողները»: Իսկ արձակն ու թատերգությունը համեմատաբար քիչ են ուսումնասիրվել. սույն ատենախոսությունը կարևորվում է և այս առումով, մանավանդ որ հայցորդն իր նախասիրած գրողի ստեղծագործությունը քննում է ժամանակակից արձակի և գրաքննադատության համապատկերում, որով ընդհանուր պատկերացում է տալիս արդի գեղարվեստական մտածողության զարգացման միտումների և օրինաչափությունների մասին:

Ծավալային իմաստով առանձնապես մեծ չէ Վանո Միրադեղյանի գրական ժառանգությունը: Այդ ինքնատիպ, մեծ էրուղիցիայի տեք մարդը, գրողը և անհատականությունը, որը հաճախ էր վերլուծում հայության կարգավիճակը խորհրդային մյուս ժողովուրդների համակարգում և կանխագգում էր նրա փլուզումն ու այսօրը, դիտարկում էր խորհրդային կարգերի վերջին տասնամյակների անցուդարձը, կռահում էր դրանց փլուզումն ու հետխորհրդային ժամանակի՝ մեր ժողովրդի համար բախտորոշ նշանակությամբ քաղաքական անցուդարձը: Զգուշորեն հավատում, թե խորհրդային կարգերը կարող էին փլվել, բայց Վանոն արտահայտում էր

սկզբում լուռ քողարկված, թաքցրած ճշմարտություններ, ապա և՛ բարձրաձայն ու բացահայտ: Թերահավատ էինք. ե՞րբ է մարգարեն իր գավառի մեջ պատիվ ունեցել...

Վանո Սիրադեղյանը ներգրավվեց նորաստեղծ Հայաստանի Հանրապետության պետականաշինական գործընթացում և վարելով կարևոր պաշտոններ՝ ցավոք, ստեղծագործելու քիչ ժամանակ ունեցավ: Սա էլ էր կամավոր գոհաբերություն: Երբ 1900 թ. Եր. Օտյանը հնչակյան ներսելի գործիչ Արփիարյանին հորդորում էր «քաշվել կուսակցական գործեն», քանի որ հայ ժողովուրդը քաղաքական գործիչների, պոռոտախոս ճամարտակողների պակաս չունի, բայց «Արփիար գրողն է որ մեզի կպակսի», վերջինս պատասխանել էր. «Ի՞նչ ընեմ, Երվանդ, ես քաշվիմ կուսակցական գործեն՝ տեղս խենթեր պիտի գան և պատուհաս ու փորձանք ըլլան այս խեղճ ժողովրդի գլխուն»: Այս պատասխանին չէր կարողացել առարկել հանճարեղ գրողը:

Պատմությունը կրկնվեց և Վանո Սիրադեղյանի պարագայում: Նա էլ հայրենիքի ու ժողովրդի ճակատագիրը չէր վստահում պոռոտախոս ճամարտակողներին:

Ըստ հաշվարկների՝ նրա հրատարակված չորս գրքերի ընդհանուր ծավալը 1129 էջ է: Համեմատության համար հիշենք, որ Հովհ.Թումանյանի արձակը ներկայացնող 5-րդ հատորը՝ 2023 թ. լույս տեսած, որի խմբագիրն ենք եղել, բնագրերով, տեքստային տարբերություններով, ծանոթագրություններով և ուղեկցող նյութերով 1176 էջ է: Ընդամենը մի մեծ վեպի ծավալ է սա, և երկուսի տարբերությունն էլ, գուտ քանակական իմաստով, շատ չէ: Բայց այստեղ էականը դա չէ. ծավալով չի որոշվում գեղարվեստական որակի խնդիրը, և մենք էլ այդ երկու հեղինակներին ո՛չ համեմատելու, ո՛չ էլ հակադրելու ցանկություն ունենք: Պարզապես ընդգծում ենք, որ ատենախոսության հեղինակը հատուկ նպատակադրմամբ է ուսումնասիրել ուրիշների կողմից առանձնապես չկարևորված այս հեղինակի գեղարվեստական ու հրապարակախոսական երկերը, որոնցում գրողական թարմ հայացքով պատկերված է այն բարդ իրականությունը, որի մեջ մենք ենք ապրել և ապրում ենք այսօր էլ:

Ի՞նչ էր ավելացնում Վանո Սիրադեղյանը իրեն նախորդած Հր. Մաթևոսյանի, Հովհաննես Մելքոնյանի, Մուշեղ Գալշոյանի, Վ. Պետրոսյանի, Պերճ Չեյթունոցյանի, Գևորգ Դևրիկյանի, Գևորգ Արշակյանի, Լևոն Խեչոյանի և իրեն ժամանակակից ու հաջորդած սերնդի արձակագիրների՝ Վրեժ Իսրայելյանի, Ալվարդ Պետրոսյանի, Արամ Պաչյանի, Ալիս Հովհաննիսյանի, Սուսաննա Հարությունյանի գրական վաստակին:

Ի՞նչ նորություններ էր նա բերում ժամանակի ընկալման, կյանքի քառսի կարգաբերման, գեղարվեստական մտածողության ոլորտներում, ինչպե՞ս էր նա թարմացնում արձակը

գեղարվեստական նոր մտածողությամբ և պատմվածքի, վիպակի ժանրային նոր յուրացումներով:

Պատահական չէ, որ հրատարակված առաջին իսկ պատմվածքներից նկատվեց ճշմարիտ գրողը, գնահատվեց արդեն համբավված ավագների՝ Հրանտ Մաթևոսյանի ու Պերճ Զեյթունցյանի կողմից, թարգմանվեց ու տպվեց համամիութենական հեղինակավոր «Литературная газета»-ում, արժանացավ «Дружба народов» հանդեսի մրցանակին: Գոնե ինքներս մեզ հարցնում ենք՝ ինչու՞ Սիրադեղյանի առաջին գիրքը լույս տեսավ իր գնահատումների մեջ զուսպ ու ժլատ Հր. Մաթևոսյանի հույժ բնութագրական առաջաբանով: Այս հարցադրումը մեկ պատասխան ունի. գրողը ճանաչել ու հասկացել էր եկող գրողին, կանխատեսել նրա գրական ապագան: Ահա այսպես ճիշտ ու տպավորիչ է ներկայացնում Սիրադեղյան գրողի մուտքը երիտասարդ հետազոտողը:

Միանգամայն ճիշտ է հայցորդի մոտեցումը, որով գրողը դիտվում է որպես իր նախորդների ժառանգորդ. մի քիչ էլ խորանար՝ Վանո Սիրադեղյանը կդիտվեր նրանց ազգակից՝ ազգային գրականություն ստեղծած մեծերի օրինաչափ ժառանգորդ:

Ատենախոսության էջերում Սիրադեղյանի գրական ժառանգությունը դիտված է լայն ընդգրկումով՝ բանաստեղծական փորձերից, մամուլում տպված առաջին պատմվածքներից ու վիպակներից սկսած մինչև առանձին գրքերով հրատարակված պատմվածքներ ու վիպակներ, մինչև արդիական սուր հնչողությամբ գեղարվեստական հրապարակախոսություն:

Կարևորվում են և գրողի ինքնատիպության գլխավոր ցուցանիշները՝ կերպարակերտման արվեստի, լեզվի ու ոճի խնդիրները, որոնք ուսումնասիրողը քննում է իր տեսանկյունով՝ հենվելով նաև լեզվաբանական - ոճագիտական գրականության արդի ձեռքբերումների վրա:

Ահա մոտավոր շրջանակը այն հարցերի, որոնք քննվում են բանասիրության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար հրապարակային պաշտպանության ներկայացված՝ ներածությունից, հինգ գլուխներից, եզրակացությունից և օգտագործած գրականության ցանկից բաղկացած սույն ատենախոսության էջերում, որն ունի քննարկվող հարցադրումներով պայմանավորված նպատակահարմար կառուցվածք:

Ուսումնասիրվող նյութին հայցորդը ցուցաբերել է համակարգված մոտեցում և կիրարկել ճշգրիտ մեթոդաբանություն. նախորդների և ժամանակակիցների հետ առնչությունների

համապատկերն ամբողջացրել է նաև ժամանակի գրողների ու քննադատների վերաբերմունքի քննությամբ, որով նրա բնութագրումները ձեռք են բերել գիտական հավաստիություն:

Ներածության մեջ պատշաճորեն հիմնավորվում է թեման, նրա արդիականությունը, գիտական նորույթը, հստակորեն պարզաբանվում են ուսումնասիրության նպատակադրումներն ու հիմնախնդիրները, իսկ բուն շարադրանքը ներկայացնում է Վանո Սիրադեղյան գրողի և նրա գրական – հրապարակախոսական ժառանգության բարեխիղճ և արդյունավոր քննությունը:

Մենք հանգամանորեն չենք անդրադառնա բոլոր հինգ գլուխների՝ «Վանո Սիրադեղյանի մուտքն ու գրական արձագանքները», «Գյուղը և բնությունը իբրև գրական տարածություն», «Ժանրային իրացումների և պատկերակերտման առանձնահատկությունները», «Սիրադեղյանի արձակի լեզուն և ոճը իբրև կերպարակերտման միջոց», «Վանո Սիրադեղյանի հրապարակախոսությունը» խորագրերով գլուխների ու նրանց ենթագլուխների բոլոր մանրամասնություններին, որոնք, անշուշտ, էական են ատենախոսության ամբողջական գիտական արժեքի բացահայտման տեսանկյունից: Խուսափելով ատենախոսության նյութի նկարագրական վերապատմումից, մանավանդ որ հայցորդն ինքը հանգամանորեն ներկայացրեց իր կատարած աշխատանքը, բավարարվում ենք լոկ ատենախոսության գիտական նվաճումների ընդհանուր բնորոշումներով, որոնք, համոզված ենք, նույնպես ընկալելի կդարձնեն սույն ատենախոսության գիտական կշիռն ու արժեքը:

Աստիճանաշնորհող մասնագիտական խորհրդի հարգելի անդամների և ներկաների ուշադրությունն ենք հրավիրում հետևյալ հիմնախնդիրների վրա, որոնց պարզաբանումները համարում ենք ատենախոսի առավել կարևոր գիտական ձեռքբերումները և, ինչու չէ, նաև թերացումներն ու վրիպումները:

Գոհացնող է այն իրողությունը, որ հայցորդը Վանո Սիրադեղյանի արձակն ու հրապարակախոսությանը քննում է ոչ թե մեկուսի՝ մեր գրականության զարգացման ընթացքից կտրված ու առանձնացված, այլ գրական լայն համապատկերում՝ 1970 – 80-ական թվականների և հետագա գրական կյանքի ու գեղարվեստական զարգացումների մթնոլորտում: Հաջողված են հատկապես այն էջերը, որոնցում կատարված են Հր. Մաթևոսյանի, Վրեժ Իսրայելյանի, Արտաշես Ղափրիյանի, Վազգեն Սարգսյանի և սերնդակից մյուս արձակագիրների պատմվածքների, վիպակների գուգադրական քննություն, որով լիարժեք իրականացվել է Վանո Սիրադեղյանին իր ժամանակի մեջ դիտարկելու խնդիրը:

Այսուհանդերձ, սակայն, կարծում ենք՝ փոքր-ինչ չարաշահված է հետպատերազմյան արձակին, գյուղագրություն-քաղաքագրություն բանավեճին և մանավանդ պատմավեպի ժանրին ու Ստ. Չորյանի, Սերո Խանգադյանի, Պ. Չեյթունցյանի, պատմավեպերին և Բաղիշ Հովսեփյանի, Միքայել Շաթիրյանի, Մկրտիչ Սարգսյանի, առհասարակ վեպի ժանրին ծավալուն անդրադարձումները, որոնք բուն խնդրից փոքր-ինչ շեղման տպավորություն են թողնում:

Սա նկատվում է հատկապես երկրորդ գլխում, որի այս մասերը, թվում է, կարելի էր մի քիչ սեղմել ու կենտրոնանալ հենց Սիրադեղյանի ստեղծագործությունների վերլուծության վրա՝ ցույց տալով նրանց տարաբնույթ առնչությունները նախորդների ու ժամանակակիցների հետ՝ ընդգծելով Վանո Սիրադեղյան գրողի ինքնատիպությունն ու նրա պատմավածքների, վիպակների գեղարվեստականությունը, հրապարակախոսական տարրերի առկայությունը գեղարվեստում և գեղարվեստի տարրերի անխուսափելի առկայությունը նրա հրապարակախոսական երկերում՝ ինչն ընդհանուր առմամբ հաջողված է ատենախոսության մեջ:

Ատենախոսության էջերում, ցավոք, նկատվում են որոշ անհաջող ձևակերպումներ, կետադրական և տեխնիկական բնույթի վրիպումներ, ինչպես՝ 3-րդ էջում՝ Սիրադեղյանի՝ իբրև գրողի ... մասնական բացահայտչի բութը կա, ստորակետը չկա, «Գարուն ամսագրում» կապակցության մեջ *ամսագիր* բառը պիտի լիներ չակերտից դուրս, «Այստեղ իրավացիորեն պետք հաշվից դուրս թողնել» արտահայտությունը մշուշոտ է, էջ 29-ում՝ *իրավաբանություն* բառում բացակայում է յ տառը, նույն էջում անքննադատ մեջբերել է Լ. Հախվերդյանի անփութ նախադասությունը՝ չնկատելով ոճական անհարթությունը, էջ 31-ում Հր. Մաթևոսյանի «Նարինջ զամբիկը» վերնագրից *և* տառն է դուրս թռել՝ դարձնելով *նարիջ զամբիկ* և այլն:

Համոզված ենք, որ այս բնույթի վրիպակները պատահական են և բնավ չեն ստվերում պատշաճ մակարդակով շարադրված, գիտական որոշակի կշիռ ունեցող բովանդակալից աշխատանքը: Պետք է գնահատել և հայցորդի ընդհանուր գրական բարձր գրագիտությունը, նորագույն շրջանի մեր գրականության պատմության քաջիմացությունը, որ ~~անհամար~~ ենք ~~ատենախոսության էջերում:~~

Նրա հարցադրումներն ու պատասխանները, եզրահանգումները տրամաբանական են, վերլուծությունները, զուգադրական քննությունները, շարադրանքի ոճը՝ գիտական: Ատենախոսության գերակշիռ արժանիքները հիմք են տալիս մեզ՝ միջնորդելու ԲՈԿ-ի ԵՊՀ-ում գործող «Ժ. 01. 02 – Նորագույն շրջանի հայ գրականություն» մասնագիտացված խորհրդին՝ Հովհաննես Հովակիմի Հովակիմյանին «Վանո Սիրադեղյանի ստեղծագործությունը» ատենախոսության համար շնորհելու իր հայցած բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանը, որին նա միանգամայն արժանի է:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՍԱԽՈՍ՝ *Լեւոն* ՍԱՄՎԵԼ ՍՈՒՐԱԴՅԱՆ

բ.գ.դ., պրոֆեսոր, ԵՊՀ ակադ. Հր. Թամրազյանի անվ.

հայ գրականության պատմության և գրակ. տեսության ամբիոնի

պատվավոր վարիչ, ՀՀ գիտության վաստակավոր գործիչ

13. 06, 2025



Պրոֆ. Ս. Մուրադյանի ստորագրությունը հաստատում եմ՝

ԵՊՀ գիտքարտուղար՝

Ս. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

բ. գ. թ.